Ծանոթություն.— *1.* Այգին, որ ի գեղին առաջի, *պետք է հասկանալ Բերդիկ գյուղի մոտ գտնվող Խաչատուրի այգին, այլապես պետք է ենթադրենք, որ առաջի գյուղի անունն է։*

2. Հնձանատունը հնձանից *տարբեր հասկացողություն է եղել, ըստ երևույթին* հնձան *կոչվել է բացօթյա տարածության մեջ կառուցվածը, իսկ հնձանատուն, որ բառարաններում չկա, հարկի տակ եղող հնձանն է կոչվել։*

124. Գտասունի նախագավիթ, հր պատին ներսում

(Լուս. № 78)

Հ ՉԻԹ Մ 1280

Հրատարակված է՝ Ջալ 35, Դրիմ 61—62, Վիմ 102

Նկ. 78. Արձ. № 124։

1 *Թվին ՉԻԹ։*
2 *Ես՝ Խաչատուր միակեց, աշակեր-*
3 *տ Ստեփանոսի միաբանեցա սբ Ած-*
4 *ածնիս, էտու պահարան Դ մասամբ*
5 *եւ այլ արդիւնս։ Հայրս Յոհաննէ-*
6 *ս եւ միաբանքս տվին Եղիական կ-*
7 *իրակէին զամէն պատարագն Կարապե-*
8 *տին, Նահապետին, Թոթրին։ Կատարի-*
9 *չքն աւրհնին յԱյ եւ խափանողն դատի։*